

ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանի «Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկական ֆիզիկական կուլտուրայի դասերին» թեմայով ատենախոսության՝ ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)» մասնագիտությամբ՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը

Վերջին տասնամյակներում առողջ ապրելակերպի գաղափարը ավելի ու ավելի արդիական բնույթ է ստանում: Պայմանավորված բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, արժեհամակարգային և այլ գործոններով այսօր բժշկության, հոգեբանության մանկավարժության ոլորտի բազմաթիվ մասնագետներ ահազանգում են մարդկանց տարեց-տարի վատթարացող առողջական վիճակի մասին:

Սեփական առողջությունը կարևորելու և որպես արժեք իմաստավորելու, առողջապահական գործունեություն իրականացնելու, սեփական առողջական վիճակը հսկելու և գնահատելու, ինչպես նաև առողջ կենսակերպին մշտապես հետևելու հիմքերը դրվում են արդեն իսկ նախադպրոցական տարիքում և ամրապնդվում հանրակրթական ուսուցման տարիներին: Այս տեսանկյունից կարևորվում է այն գաղափարը, որը ներդրվել է ներկայացվող ատենախոսության հիմքում և որը կազմել է է Սաթենիկ Խաչատրյանի հետազոտության առանցքային գաղափարը:

Ուստի ընտրված թեման խիստ արդիական է և կարևորվում է 5-7 դասարանների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման գործընթացում:

Հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտության մասին ցայտուն խոսում են դպրոցահասակ երեխաների առողջական ոչ բավարար վիճակը, ֆիզկուլտուրային ինքնուրույն պարապմունքներ չկազմակերպելու հանգամանքը, շարժողական ակտիվության սակավությունը և բազմաթիվ այլ փաստեր, որոնք ի հայտ են եկել տարբեր երկրների, այդ թվում Հայաստանի դպրոցականների շրջանում:

Հայցորդը արդարացիորեն նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել կրթության ոլորտում առողջ ապրելակերպի դասընթացում ներգրաված սովորողների շրջանակը՝ հիմնվելով որ միայն ներկայիս 8-11 դասարաններում ստացվող գիտելիքների վրա, այլ ներգրավել այդ գործընթացում նաև ավելի վաղ տարիքի դպրոցականներին: Հեղինակը համոզված է, որ նման մոտեցմամբ հնարավոր կլինի ավելի վաղ տարիքի դպրոցականների մոտ սերմանել առողջ ապրելակերպի կարևորագույն գաղափարը, ձևավորել դրան հետևելու համար անհրաժեշտ տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ:

Հեղինակը ատենախոսության ներածական մասում հստակ հիմնավորում է դպրոցի 5-7 դասարաններում առողջ ապրելակերպի հիմունքների ձևավորման անհրաժեշտությունը և կարևորությունը՝ ներկայացնելով մի շարք հակասություններ: Դրանց հիմքում Ս. Խաչատրյանը տեսնում է աշակերտների ոչ բավարար առողջական վիճակի, դպրոցականների առողջ ապրելակերպ վարելու պասիվ դիրքի, այս հիմնահարցի արդյունավետ լուծման ուղիների և միջոցների մասին ծնողների թերի իրազեկության և այլ հանգամանքների մեջ:

Հայցորդը ատենախոսական աշխատանքը ներկայացնելիս հետևել է ընդունված դասական մոտեցումներին և ներկայացրել այն ավանդական կառուցվածքով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հիմնախնդրի վերաբերյալ, անհրաժեշտ գիտամեթոդական, ուսումնական գրականության վերլուծության գլխից և սեփական փորձարարական հետազոտության արդյունքները ներկայացնող 2 գլխից: Աշխատանքը ներառում է նաև եզրակացություն, գործնական առաջարկությունների, գրականության և հավելվածի բաժինները:

Անհրաժեշտ գրականությունը ատենախոսը ուսումնասիրել է այն ուղղություններով, որոնք թույլ են տվել պարզաբանելու հիմնախնդրի վերաբերյալ առկա հետազոտությունների արդյունքները, առողջ ապրելակերպի ձևավորման կարևորությունը սովորողների շրջանում:

Ս.Խաչատրյանը ատենախոսության մի բաժին տրամադրել է առողջ ապրելակերպի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկություններին դպրոցական ուսուցման պայմաններում:

Կարծում եմ, նման հարցերի ուսումնասիրումը հնարավորություն է տվել ատենախոսին հստակեցնել առաջադրվող հիմնախնդրի ներկա վիճակը, կարևորությունը աճող սերնդի առողջության ամրապնդման գործում, առողջության վերաբերյալ արժեքների ձևավորման և առաջացած հիմնահարցերի լուծման օպտիմալ ուղիների և պայմանների մասին:

Գրագետ մոտեցում է ցուցաբերել ատենախոսը հիմնախնդրի վերաբերյալ Հայաստանի հանրապետությունում առկա վիճակը պարզաբանելու նպատակով՝ կազմակերպելով սոցիոլոգիական հետազոտություն տարբեր քանակակազմի շրջանում:

Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ հարցման մեջ են ընդգրկվել ուսումնասիրվող տարիքի դպրոցականները, դպրոցի ֆիզիկական կուլտուրայի և այլ առարկաների ուսուցիչները ու ինչը ոչ պակաս կարևոր է՝ նաև դպրոցականների ծնողները:

Նման մոտեցումը թույլ է տվել Ս. Խաչատրյանին խորը ուսումնասիրել և հստակ պատկերացում կազմել առողջ ապրելակերպին հետևելու և վարելու վերաբերյալ տարբեր

տեսանկյուններից՝ համադրելով կարծիքները և դրա հիման վրա կատարելով կարևոր եզրահանգումներ:

Սոցիոլոգիական բազմաբնույթ հարցումների արդյունքները հնարավորություն տվեցին ատենախոսին նախանշել հետազոտության հաջորդ փուլի հիմնական ուղղությունները, պայմանները, կազմակերպման ձևերը, որոնք թույլ կտաին ձևավորել 5-7 դասարանի աշակերտների մոտ ճիշտ արժեքային վերաբերմունք սեփական առողջության նկատմամբ՝ կարևորելով դրանում ֆիզիկական կուլտուրայի դերը և հատկապես անհրաժեշտ գիտելիքների յուրացումը, ինքնուրույն ֆիզիկական ակտիվություն ապահովելու կարողությունը:

Աշխատանքի փորձարարական բաժնում ատենախոսը ներկայացրել է բազմաթիվ աղյուսակներ և տրամագծեր՝ դրանով ավելի տեսանելի և ըմբռնելի դարձնելով հետազոտության արդյունքում ստացված թվային տվյալները:

Հիմք ընդունելով գրական աղբյուրների ուսումնասիրության, սոցիոլոգիական հարցման և սեփական դիտարկումների արդյունքները Ս. Խաչատրյանը մշակել է փորձարարական ծրագիր՝ հիմնված 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում տեսական գիտելիքների փոխանցման, սեփական առողջության ու ֆիզիկական զարգացման աստիճանը հսկելու գործնական կարողությունների ձևավորման վրա:

Երեք դասարանում միաժամանակյա կազմակերպված մանկավարժական գիտափորձով ատենախոսը փորձել է հիմնավորել իր կողմից մշակված առողջ ապրելակերպի ձևավորմանն ուղղված ծրագիրը: Հավելենք, որ ծրագիրը մշակելիս հեղինակը աշխատել է հաշվի առնել հիմնախնդրի հետ կապված այն թեմաները, որոնք արդեն իսկ ուսուցանվում են ավելի բարձր դասարաններում: Ընդ որում այս դեպքում 5-7 դասարաններում ընդգրկել են ինչպես նոր, այնպես էլ 8-11 դասարաններում գործածված թեմաները՝ սակայն այլ բովանդակությամբ:

Հեղինակի կողմից մշակված ծրագիրը փորձարկվել է մեկ ուսումնական տարվա ընթացքում, որի սկզբին և ավարտին իրականացվել է փորձարարական և ստուգողական դասարաններում առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքների ստուգում, ինչպես նաև ֆիզիկոկուլտուրային ինքնուրույն պարապմունքներում ներգրավվածության աստիճանի պարզաբանում::

Հետազոտության արդյունքում հեղինակը կարևորել է նաև ծրագրի ներգործության արդյունքները երկու խմբի դեռահասների մարզական գործունեության մեջ ներգրավվելու տեսանկյունից:

Ատենախոսի տվյալներով 5-7 դասարանի դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի դասերի, արտադասարանական և արտադպրոցական ֆիզկուլտուրային – առողջարարական միջոցառումների իրականացման արդյունքում ստուգողական խմբերի աշակերտների համեմատ հավաստի բարելավվել են փորձարարական

դասարանների երկու սեռի դեռահասների առողջ ապրելակերպի վերաբերյալ տեսական գիտելիքները՝ ինչը դրսևորվել է ավելի բարձր թեստային գնահատականներում: Պետք է սակայն նշել, որ 2 խմբի թեստավորման արյունքների տեղաշարժի աղյուսակ 23 և 27-ում (էջ 103,112) տվյալների միջինների տարբերության հավաստիության աստիճանը հեղինակը ներկայացրել է 0,1 կամ 5%-ով, ինչը պետք է նշվեր 99 կամ 95 մեծությամբ

Այսպիսով կարելի է նշել, որ Ա.Խաչատրյանը բացահայտեց մշակված փորձարարական ծրագրի դրական ներգործությունը 5-7-րդ դասարանի աշակերտների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորման վրա:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է պարզ լեզվով՝ գլուխների և ենթագլուխների տրամաբանական շարունակությամբ:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը անհրաժեշտ է ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք բացատրման և պարզաբանման անհրաժեշտություն ունեն.

1. Սոցիոլոգիական հարցման ընթացքում որոշ հարցաթերթերում (հավելված 1,2) բացակայում է հարցումը կազմակերպող հիմնարկի անվանումը: Վերջինիս առկայությունը ներկայացնում է հարցաթերթը որպես պաշտոնական փաստաթուղթ՝ վստահություն ներշնչելով հարցվողներին, մատնանշելով նաև ռեսպոնդենտների մասնակցության կարևորությունը և պատասխանների նշանակությունը:

Ոչ կոռեկտ է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին ուղղված 9-րդ հարցի ձևակերպումը՝ «Անհրաժեշտություն համարում եք, արդյոք, որ «Առողջ ապրելակերպ» բաժնի դասավանդումը պետք է սկսել 5-րդ դասարանից» (հավելված 3), քանզի այն չի ընդգրկում բոլոր տարիքային խմբերը, որտեղ կարող է դասավանդել առողջ ապրելակերպը և միաժամանակ ուղղորդում է ռեսպոնդենտին կոնկրետ պատասխանին:

2. Որքան է նպատակահարմար սոցիոլոգիական հարցման արդյունքներին վերաբերող 10-րդ աղյուսակի (էջ 68) «Առողջ ապրելակերպի սուբյեկտիվ գնահատականն աշակերտների սոցիոլոգիական հարցման տեսանկյունից» անվան մեջ օգտագործել սուբյեկտիվ բառը, քանի որ հետազոտվել է ոչ 1, 2 կամ 10 ռեսպոնդենտ, այլ իրականացվել է 3000-ից ավելի օրինակով լուրջ մասսայական հարցում: Եթե այդ քանակի աշակերտների պատասխանները սուբյեկտիվ են, ապա կարելի է արդյոք նման տվյալները հիմք ընդունել տարբեր եզրահանգումներ կատարելու համար:

3. Ատենախոսությունում առկա են շարադասական և մտքային որոշակի թերություններ: Այսպես հավելված 1-ում ֆիզիկական կուլտուրայի դասերին վերաբերվող 8-րդ և 9-րդ հարցերը՝ «Հաճախ ես բաց թողնում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերը» «Եթե բաց ես թողնում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասը», ձևակերպելիս ճիշտ կլիներ «բաց ես թողնում»

բառակապակցության փոխարեն օգտագործել «չես հաճախում» բառակապակցության:

Ատենախոսության «նկար» 2,5,6-ում (էջ 72, 104, 107) ներկայացված պատկերները ոչ թե նկարներ են, այլ տրամագրեր կամ գծապատկերներ:

4. Անհասկանալի պատճառով աշխատանքում չի հիշատակվում հանրակրթական դպրոցի 2,3,4-րդ դասարանների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասագրքերը, որոնցում հեղինակները կարևոր տեղ են հատկացրել առողջ ապրելակերպի հարցերի պարզաբանմանը: Կարծում ենք այս դասագրքերում ներկայացված առողջ ապրելակերպի թեմաները կարող էին 5,6,7 դասարանների թեմաների ձևավորման ելակետային հիմք հանդիսանալին, ապահովելով կրտսեր և 8-11-րդ դասարանների «առողջ ապրելակերպ» դասընթացի բովանդակության միջև ավելի հստակ հաջողությունը:
5. Աղյուսակներ 4,9,12-ի (էջ 56,65,71) վերնագրերից ենթադրվում է, որ ատենախոսը ներկայացնում է դպրոցականների սոցիալական վարքի ցուցանիշները՝ «պահպանում են օրվա ռեժիմ», «տանն ունեն մարզագույք», «հոգնում են, բայց հազվադեպ» և այլն: Մինչդեռ բերված չափանիշները ամենևին էլ չեն նկարագրում դպրոցականների սոցիալական վարքը, այլ բնութագրում են առողջ ապրելակերպի վարման և ապահովող որոշ ցուցանիշներ:
6. Հետազոտության եզրակացությունների շարքում բացակայում է եզրակացություն, որը տրամաբանորեն պետք է բխեր ատենախոսության 1-ին խնդրից՝ «բացահայտել առողջ ապրելակերպի հիմնախնդրի վիճակը կրթական համակարգում՝ ըստ գրականության աղբյուրների վերլուծության տվյալների»: Իսկ 5-րդ եզրակացությամբ ատենախոսը հիմնավորում է այն միտքը, որ «... առողջ կենսակերպ վարելու նկատմամբ պատասխանատվությունը, բացի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներից, պետք է կրեն նաև ծնողները, այլ առարկաների ուսուցիչները...»: Սակայն նման պատասխանատվության հարցեր ատենախոսը չի ուսումնասիրել:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն նսեմացնում Ս.Խաչատրյանի կատարված մեծածավալ հետազոտության նշանակությունը և կարևորությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն ինքնուրույն կատարված, ավարտուն աշխատանք է, եզրակացությունները բխում են հետազոտական աշխատանքի արդյունքներից:

Ատենախոսության սեղմագրում արտացոլված է ատենախոսության հիմնական դրույթները: Սակայն ոչ ամբողջությամբ է ներկայացված հետազոտության

